




ՀԱՅԲԱՆԱԿԱՆ

ԱՐԱՐԱԿԱՆ

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 144

25 ԱՊՐԻԼ 1914

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՆՆԵՐ

ԵՍ ԵՒ
ԵՃՆԱՆ
ՏՈՐԻԿ

ՏՕՆԱՑՈՅՑ

Ապրիլ 26	†	Կիր.	դձ.	Գ.	Կանաչ Կիւրակէ:
27		Բշ.	դկ.	ԺԶ.	or Յինանց:
28		Գշ.	աձ.	ԺԷ.	or Յինանց:
29		Դշ.	ակ.	ԺԸ.	or Յինանց:
30		Եշ.	քձ.	ԺԹ.	or Յինանց:
Մայիս 1		Ուր.	քկ.	Ի.	or Յինանց:
2		Շք.	զձ.	ԻԱ.	or Յինանց:

ԿԱՐԵՒՈՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Երկար ժամանակէ ի վեր պէսքն զգացուած է Ս. Դրոց
ընտիր քարգմանութեան մը Հայերէն աշխարհաբար եւ Թուր-
քերէն լեզուներու: Այժմ Վեր. Յիսուսեան Հարց ջանիւք սոյն
պէսքին զոհացում տրուած է մասամբ: Արդի զիտուններու հե-
տազօտութեամբ նոյսացած բնագիրներու վրայէ քարգմանած են
յիշեալ Հարց Հայերէն աշխարհաբարի եւ Թուրքերէնի՝ չորս
Աւետարաններն ու Առաքելոց Դործները, ուղղելով գրչագի-
րներու սխալներն ու անճշտութիւնները, եւ մքին ու դժուա-
րիմաց խօսքերուն համար աւելցնելով համառօտ, դիւրիմաց
եւ կարեւոր ծանօթութիւններ:

Լաւ քուղք եւ մաքուր տպագրութիւն:

Գին. Կազմեալ 12 դանեկան, թղթակազմ 8 դանեկան,
մէկ մի տեսք քարգմանակազմ 3 դանեկան:

Կը գտնուի՝ Բերա, Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց
(Պայրամ փողոց), եւ Վեր. Յիսուսեան Հարց ֆոլ, եւ Պոլիս
Պալենց եւ Նազընեան գրավանդառներու ֆոլ. եւ Հայաստանի
գաւառաց մէջ, նմանապէս Վեր. Յիսուսեան Հարց վան-
քերը, (Պէյրուք, Ասանա, Կեսարիա, Սեբասիա, Նիդոկիա,
Ամասիա եւ Մարզուան):



ԿԱԹՈՂՈՍԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹ-ԱԹ-ԵՐԹ

Չորրորդ տարի ④ 25 Ապրիլ 1914 ④ Թիւ 144

«Մրբազան Բաժանայապետ Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաբերքը շա-
նունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մրբազան Հայրն սրտազին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարգ. Մերի տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թեոքեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կրիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 բռնահամարաւ:

ԴԵՊՔՆԵՐ ԵՒ ՍԿԶԻՐՈՒՆԻՆԵՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆԿՈՒՄ

ԵՒ

ՄՅՔԻ ՀԻՌԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բ. (*)

1870ի Տիեզերական ժողովը դուժարելէ
առաջ խնդիր եղաւ ի Հոռոմ թէ անթեմ ե-
պիսկոպոսներն ալ պէ՛տք է հրաւիրել ժողո-
վոյ. Այն լրջութեամբ, իմաստութեամբ եւ
անկողմնակալ ոգւով, որովք կ'ուսումնա-
սիրուին եւ կը վճռուին այս կարգի խնդիրք,
որոշուեցաւ թէ պատճառ չկայ զանոնք մեր-
ժելու: Բայց պայքարն սկսած էր անոնց

(*) Տե՛ս Թիւ 141, էջ 218.

դէմ ի Գերմանիա. Շուրջ եւ Տէօլինկէր կը
պնդէին թէ Ընդհանուր ժողովի մը մէջ ե-
պիսկոպոսք ամէն բանէ առաջ վկաներ են
իրենց հօտին հաւատալեաց, քրիստոնեայ
ժողովուրդին ընդունած կամ մերժած վար-
չապետութեանց, Հատեալպէս կ'եզրակացնէին
թէ անթեմ եպիսկոպոսք պէտք չէ հրաւիր-
ուին ի ժողով Տիեզերական:

Սակայն իրենց մեկնակէտը սխալ լինելով՝
չէր կրնար անշուշտ իրենց եզրակացութիւնը
ճիշդ եւ ընդունելի լինել. Աստուածաբանա-
կան ու պատմական աստուգութիւնն այն է
թէ Ընդհ. ժողովոյ մը մէջ եպիսկոպոսք նախ
դատաւոր են եւ յետոյ վկայ. Ամէն բանէ
առաջ պարտք եւ իրաւունք ունին վճռելու
եւ ուսուցանելու հաւատոյ խնդիրները. Նը-
շանաւոր բողոքական կանոնագէտն իսկ, Պ.
Հինշ կը հերքէ Տէօլինկէրի եւ Շուրջի
կարծիքը, զոր չվարանիր կոչել « Պատ-

մակաճօրէն սխալ», եւ կը յաւելու իւր անժխտելի հմտութեամբ թէ ամէն ժամանակ Ընդհանուր Ժողովներու պաշտօնն եղած է «որոշել թէ ո՛րն է ողջամիտ վարդապետութիւնն եւ գտնելու զանոնք որ կը հեռանան անտի» (Das Kirchenrecht der Katholiken und Protestanten in Deutschland, III, 341):

Ուստի լրջութենէ հեռի է բոլորովին՝ անթեմ եպիսկոպոսներու ձայնն ու ներկայութիւնն ապօրէն կամ անարժէք հռչակել Տիեզերական Ժողովներու մէջ: Այսպիսի մտտի զանազանութիւններ ազդեանքն եւեթ կրնան չլացնել, եւ անձկամիտ հոգիներու միայն կրնան հաճոյ լինել: Ընդհակառակն՝ որչափ աւելի լայն ու վեհ կ'երեւի Ս. Քահանայապետին յայտարարութիւնն. «Ubi lex non distinguit nec nos distinguere debemus. Ուր օրէնքը չի զանազաներ եւ ո՛չ մենք պարտինք զանազանել»:

Եկեղեցական իշխանութիւնն ո՛չ միայն անիրաւ չէր իւր այս բնթացքին մէջ, այլ մանաւանդ թէ մեծապէս խոհեմ ու շրջահայեաց անթեմ եպիսկոպոսներու ի բաց մերժումն կրնար ստուգիւ զէնք մը ըլլալ ընդդիմախօսներու ձեռքին մէջ ընդդէմ Ժողովոյ, եւ միամիտները խաբել կամ շուարեցնել: Անսխալութեան դէմ առաջին լուրջ յարձակողն՝ անթեմներու շարքէն չէ՛ր միթէ, Մօնս. Մարէ՛ ուսուցիչ Սորպոնի եւ տիտղոսաւոր Եպիսկոպոս Սիւրայի: Եւ որովհետեւ կարգ մը «իմաստուն»ներու առջեւ՝ Ս. Պապը կամ Ս. Եկեղեցին քննադատող ամէն անձինք դիւթութեամբ իմն հսկաներու կը փոխուին, ինչք՛ր չպիտի հնարէր, ու ինչք՛ր չպիտի գրէր ատեցող մամուլն՝ յայտարարելու համար ի լուր աշխարհի թէ Մօնս. Մարէի եւ իւր քաջարի բանակին տեսիլն իսկ երկիւղ ազդեց «անդրաշնորհական»ներուն, թէ նենգամիտ հնարք մը խորհելով՝ գիտութեան եւ անկեղծութեան հերոսները Ժողովէն հեռացուցին կանխաւ տիտղոսաւորի պատրուակին ներքեւ եւն. եւն.:

Յայտարարութեան, որում արձագանգ պիտի լինէր նաեւ ի հարկէ Soli Fidei Նորմալիտ հեղինակն, որ այսօր — անօրինակ

խղճահարութեամբ մը յուղուած — կը գայթակղի մեծապէս բազմաթիւ անթեմ եպիսկոպոսներ տեսնելով Վատիկանու Ժողովին մէջ: Եւ որովհետեւ չի հաւատար թէ կարելի է գտնել այս աշխարհի մէջ մարդ մը որ իւր խղճին անսայով եւ իւր համոզումն յարգելով գործ մը կատարէ, կրնայ առանց չիկնելու «Պապ եւ Աւետարան»ի լրկել իւր ընթերցողը սորվեցնելու համար անոր... Թէ Բրոքալանցայէ ընդունած զրամական օգնութեան ի սէր փութացին քուէարկել Ս. Քահանայապետին անսխալութեան վճիռն: Ափսո՛ս, ինչպիսի՛ անկումներ կը պատրաստէ մարդ իրեն, երբ կամաւորապէս կը մաքառի ծանուցեալ ճշմարտութեան դէմ... Ու չէ՛ք մտածեր թէ կասկածներ կան, որոնք եթէ չեն կրնար սեւոտել ձիւնափայլ ճակատներն, կրնան սակայն արգարեւ շատ մը ուրիշ բաներ ապացուցանել, եւ մնալ յաւէտ անկորնչելի վկաներ կասկածողին հոգւոյն սեւութեան եւ անազնուութեան:

* *

Սխալ է նաեւ այն կարծիքը թէ «Տիեզերական Ժողովներու մէջ հաւատոյ մասերը պէտք է վճռուին միաձայնութեամբ, եւ ո՛չ սոսկ քուէից առաւելութեամբ: Պատմութիւն, տրամաբանութիւն եւ աստուածաբանութիւն կը բողոքեն նաեւ հոս: Ինչո՞ւ Ընդհանուր Ժողով կը գումարուի. — մոլորութիւն մը դատապարտելու եւ ճշմարտութիւն մը հաստատելու համար. մոլորութիւն որ յաճախ կ'սպառնայ տարածիլ իբրեւ քաղցկեղ համաճարակ, եւ ճշմարտութիւն որու դէմ սովորաբար աննշանք ոմանք չեն մարսնչիր եւ եթ, ապա թէ ոչ ի՞նչ հարկ այդչափ ձանձրութիւն յանձն առնուի, ալեւարդ ծերունիներ եւ բազմազաւ հոգեւորականներ հեռացնել իրենց վայրերէն՝ մատնելով գուցէ զանոնք երկար ու տաժանելի ուղեւորութեան մը բոլոր տառապանքներուն:

Ընդհանրապէս խօսելով՝ կարելի չէ՛ միթէ որ մոլորութեան մը նպաստաւոր գտնուին զէթ մի քանի եպիսկոպոսներ. կարելի՞ է թէ անձ մը որովհետեւ եպիսկոպոս է՝ այլեւս ենթակայ չլինի մարդկային տկարութեան եւ

կրից, մոլորելու և նոյն իսկ մոլորութեան մէջ յամառելու: Ամէնէն տարրական ողջմտութիւնն անգամ տարակոյսի տեղի չթողուր առ այս: «Եթէ լսուին անոնք, — Դուռնէլի աստուածաբանն է որ կը խօսի, — եթէ լսուին անոնք որ կը հակառակին և կ'ընդդիմաբանեն, եթէ պահանջուի անոնց հաւանութիւնն, ... ո'չ մի վիճաբանութիւն պիտի աւարտի երբէք, յաւիտենական ու անվերջանալի պիտի ըլլան անհամաձայնութիւնք. և անտի որչափ անկարգութիւն իրաց թէ՛ Պետութեան և թէ՛ Եկեղեցւոյ մէջ⁽¹⁾»:

Նիկիոյ Ս. Ժողովոյն մէջ 318 Հայրապետաց վրայ 17 կամ 22 նպատաւոր էին նախ Արիոսականութեան, որոց 2ը մինչեւ ցվերջ յամառեցան, բայց չկրցան արգելել ուղղափառ վարդապետութեան և Ս. Կրօնի յաղթանակն փառապանծ:

Երկրորդ Տիեզերական Ժողովոյն մէջ որ է առաջին Կ. Պոլսոյ, 186 Հայրապետներու վրայ 36ը նպատաւոր էին Մակեդոնի և իւր հոգեմարտ հերետիկոսութեան: Ուղղափառ վարդապետութիւնը քուէարկուեցաւ մեծամասնութեամբ, և ընդունուեցաւ ընդհանուր քրիստոնէութեան կողմանէ⁽²⁾:

Յփեսոսի Ժողովոյն մէջ ուղղափառ Հայրապետք 210 էին, և 37 եպիսկոպոսք կուսակից նզովեալ Նեստորի, որոնք իրենց պիղծ աղանդապետին հետ դատապարտուեցան մեծամասնութեան քուէով, և կաթուղիկէ վարդապետութիւնն հակառակ իրենց վայրագ ճիշերուն՝ ընդունուեցաւ ցնծալից բերկրութեամբ և մեծաշուք հանդիսիւ բոլոր ճշմարիտ քրիստոնէից կողմանէ⁽³⁾:

Բաւ է յիշել առաջին դարերու այս երեք Ս. Ժողովները, զոր էջմիածնական և յուս-

նադաւան Եկեղեցիք իսկ անսխալ ու տիեզերական կը դաւանին, կը ճանչնան ու կը քարոզեն պաշտօնապէս:

Յայտնի է ուրեմն թէ ո'չ բացարձակ և ո'չ բարոյական միաձայնութիւն հարկաւոր չէ բնաւ Էնդհ. Ժողովոյ մը վճռոյն և օրինաւորութեան և վաւերականութեան համար. քուէից մեծամասնութիւնն եւ եթէ կը բաւէ այսօր, ինչպէս կը բաւէր ի հնումն, և պիտի բաւէ ցվերջ⁽⁴⁾:

Ինչ որ սակայն բացարձակօրէն անհրաժեշտ է, և ինչ որ կը մոռնան հանապազմեր ընդդիմախօսք՝ Նիսուսի Գրիգորի Փոխանորդին հաստատութիւնն է այն, առանց որոյ բացարձակ միաձայնութեամբ իսկ Հարց չի կրնար ըլլալ անվերապահ կերպիւ ո' և է վճիռ յիրս Հաւասոյ, բարոյականի և եկեղեցական բարեկարգութեան:

Սրբնաւորութեան պայմաններէն ո՞րն է որ կը պակսի Վատիկանեան Ժողովոյն. իր թշնամիք ի դուր կը բամբասեն զայն, իրազեկ անձնաւորութիւնք պիտեն թէ դարերու ընթացքին մէջ քիչ ժողովներ կան ուր այնչափ փայլած ըլլան վեհութիւն, կանոնաւորութիւն և անկողմնակալութիւն. խօսելու եւ գրելու ազատութիւնն իսկ յարգուած է ամէնուեւ համար. թեր ու դէմ կարծիքներ յայտնուած են առանց մարդկային ակնածութեան. եթէ ոմանք մէկէ աւելի անգամներ ի կարգ հրաւիրուած են վսեմաշուք նախագահին կողմէ, բուն խնդրէն շեղելու համար եղած է այն: Հարկւրէ աւելի Հայրապետներ խօսած են անսխալութեան մասին, և նմանապէս հարկւրէ աւելի ալ՝ պրաւոր ներկայացուցած են իրենց կարծիքն ու զիտողութիւնները. ոչ մի դժուարութիւն անտես առնուած է հոս, այլ ամէն առարկութիւններ քննուած, ուսումնասիրուած եւ լուծուած են հիմնալի համբերութեամբ: ⁽²⁾

1810 Յուլիոս Ծի վերջին նիստին ուր ներկայ էին 333 հայրապետք. բաց ի երկուքէն

(1) «Si enim audiantur, qui repugnant ac contradicunt... nulla unquam finietur controversia, aeternae erunt ac interminabiles discordiae; quanta inde et in Republica et in Ecclesia rerum perturbatio.» TOURNELLY, (*De Ecclesia*, q. 3, art. 5.)

(2) DENTU, (*L'Unanimité dans les Conc. Œcum.*, p. 35.)

(3) MGR. FESSLER, (*De numero suffragiorum*, etc., p. 5.)

(4) *Histoire Universelle de l'Eglise Catholique*, par Rohrbacher, t. VIII, p. 263.

(2) *Civiltà Cattolica*, Vol. XI, p. 237.

մնացեալ 533ը քուէարկեցին ի նպաստ ան-
սխալութեան: Եւ այս երկու հարք իսկ,
Մօնս. Ռիչչի՝ եպիսկ. Գայացոյի (Սիկիլիա),
եւ Մօնս. Ֆիցճէրըտ՝ եպիսկ. Լիզզըլ-Ռոքի
(Միացեալ Նահանգք) անմիջապէս ընդունե-
ցին մեծամասնութեան որոշումը եւ հնա-
զանդեցան գովելի օրինապահութեամբ: Ա-
հաւասիկ ինչ որ վարեւորութիւն ունի պատ-
մութեան առջեւ, ինչ որ վճռական է եւ չէ
կարելի խեղաթրելու առանց ծայրագոյն ան-
պարկեշտութեան:

Մենք կը կարծէինք թէ կարելի չէ ստել
Թուագիտութեան մէջ, (On ne ment pas
en mathematiques), բայց Բաւուրի հեղի-
նակը որ հասարակ մարգանացուներէ չէ, զը-
տած է միջոցը ստելու սաեւ թիւերու մէջ:
Ահա իր հաշիւը. «բողոքած են (անսխալու-
թեան դէմ) 200 թեմական եպիսկոպոսներ,
որոնցմէ 88ը բացարձակապէս մերժած են,
62ը բացատրութեամբ մերժած, 70ն ալ քուէ-
արկութեան ատեն Ժողովքէն դուրս ելած»⁽¹⁾

Ոչ մը պատմութիւն, ոչ մի վաւերագիր
այսպիսի թիւեր չեն տար սեղ: Ճշմարիտ է
թէ Յուլիս 13ի նրստին, ուր 601 հարք ներ-
կայ էին, 401 քուէարկեցին հանոյ Է (placet)
88 չէ հանոյ (non placet), 62ը հանոյ է
բւս կեռայն (placet juxta modum):

Թողունք որ այս վերջիսներու մեծ մասը
աւելի ազդու բացատրութիւններ կ'ուզէր
ներմուծել Անսխալութեան վճռոյս մէջ, կը
հարցնենք թէ նախնական նիստի մը քուէ-
ները ե՞րբ եւ ո՞ր երկրի մէջ վճռական են,
ե՞րբ եւ ո՞ր երկրի մէջ ներելի է աստեանը,
լոել վերջնական ու վճռական քուէարկու-
թիւն, եւ յիշատակել եւեթ, — այն ալ խե-
ղաթիւրելով — նախնական ու պատրաս-
տական քուէարկութիւն մը:

Ահաւասիկ թէ Ինչպէս Սուաը սխսեմա-
դիք ձեւ մը առած է մեր ընդդիմախօսներու
քով, եւ ճշմարտութեամբ յաղթանակելէ
յուսահատ՝ իրենց բոլոր յոյսը դրած են կեղ-
ծիքի եւ խաբէութեան վրայ առանց մտա-
ծելու թէ սուտի յաղթանակը աւօրեայ է

միշտ ու ամենէն անպատիւը՝ զոր կարելի ըլ-
լայ երեւակայել արեւու տակ:

Արդ կ'երգունցնեմ ձեզ, Տէր կամ Պա-
րոն հեղինակ Բաւուրի, կ'երգունցնեմ ձեզ
ձեր պատուոյն վրայ, Հայութեան եւ մարդ-
կութեան պատուոյն վրայ, բոկու ինծի թէ
որոնք են այն 200 թեմական եպիսկոպոս-
ները, որոնք բողոքած են Անսխալութեան
դէմ, կրնա՞ք յիշել անոնցմէ գէթ կէսին ա-
նունները... Իսկ մինք կ'ըսենք ձեզ եւ ի
լուր աշխարհի թէ 200 եպիսկոպոսներ որոնք
օրինաւոր պահանջներով մեկնած էին Հռո-
մէն Յուլիս 18է առաջ, մեծաւ մասամբ կու-
սակից էին Անսխալութեան, եւ բողոքի ձայ-
ներ չէ որ լսելի ըրին, այլ հաւանութեան,
հաճութեան, գոհութեան եւ ցնծալին ու-
րախութեան:

Թող տեսնեն ուրեմն հայ ընթերցողք,
թող տեսնէ ուրեմն ամբողջ հայութիւնը թէ
դուք կը ստէք պատմութեան, կը ստէք տրա-
մարանութեան, կը ստէք բարոյականի, կը
ստէք կրօնի, կը ստէք հաւատոյ. կը ստէք
թիւերու, կը ստէք ամենայնի եւ ամենու-
րեք, կը ստէք Հոգւոյն Սրբոյ: Մտածեցէ՛ք
գէթ վայրկեան մը այն ահաւոր յանդիմա-
նութեանց, զոր կ'ուզէ ձեզ ո՛չ վարդա-
պետ մը եկեղեցւոյ, ո՛չ գիտուն մը, ո՛չ սուրբ
մը, ո՛չ հրեշտակ մը, այլ Ճշմարտութիւնն
մարմնացեալ եւ անձնաւորեալ. «Իո՞ւք ի հօ-
րէ ի սասանայէ եք եւ զցանկութիւն հօրն
ձերոյ կամիք առնել. զի նա մարգասապան եր
ի սկզբանէ, եւ ի նւարտութեան ոչ եկաց...
յորժամ խօսիցի սուս՝ յիւրոց անի խօսի. զի
սուս է եւ հայր նորա:» (Յովհ. Է. 44):

Զ. Ս. Յ.

ՍԻԼՍԻԼԷ

Էհսասք՝ մը:

Եյի վէ նամուսը քիմսէլէր, քրիսթիան
ստամլար:

Պէտիւք պապասը՝ նամուսը, վիճտանը վէ
չալըճասը սայէսիստէ թիճարէթ ալէմիստէ
սէրվէթ սահիպի օլմուշտը: Հէր քէս թարա-
ֆընտան թազիմ ու թէքրիմ օլուսըրտը:

(1) Տօն Բողոքէր էջ 9:

Հէր բաղար Զախաւոր Պատարագա հա-
զըր պօւլընտըղը կիպի, ագչաժնա տախի
քէնտի ժողովրդապետութիւնն ժամերգու-
թիւննա կիտէր վէ չօգ տէֆա գարույը քէն-
տիսի աչտըրըրտը:

Պէօյիւք վալիտէսի գօճապնա միւնա-
սիպ միւնթէրէմ պիր գատըն իտի: Պիր հրեչ-
տակ կիպի իպատէթքեար օլուպ, հէր սա-
պահ պատարագտա հազըր օլուրտը վէ Ս.
Աստուածածին խորանընըն հէր պիր ումու-
րընը քէնտիսի կէօրիւրտիւ:

Պունլար օն էվլատ սահիպի օլմուշլարտը
իսէ տէ, հէր իքիսի տէ էվլատլարընը իաչէ
իթմէքտէն գաթիէն գօրգմաղլարտը: Պու ու-
ղուրա իճապ իտէն զահմէթի չէքէճէք գա-
տար քրիսթիանլըզ բուհըլա տօլու իտիլէր:
Զաթէն ձէնապը Հագգ տախի օնլարը հիսս
օլունըր պիր սուրէթտէ թէպրիք էյլէյէրէք
իւմիտէրինի պօշա չըգարմատը:

Հէր իքիսի տէ բիր իխթիլար պիր սինն-
տէ, էվլատ վէ թօրունլարընըն տուալարը
արասընտա, քիլիսանըն Ս. Պորհուրդլարընը
գապուլ իթմիշ օլարագ տիւնեալարընը թէրք
իթտիլէր վէ էօլմէգտէն էվվէլ տէ մէզհէպ-
լէրինէ սատըզ գալաճապլարնա տայիր օն-
լարտան վատլար ալտըլար:

* *

Բէհսէր վէ վալիսէսի մի:

Օնլար թիճարէթ իլէրինէ տէվամ իթ-
տիլէր վէ պէօյիւք պէօյիւք միւվէֆֆագի-
յէթլէրէ նայիլ օլտուլար:

Բէհսէրի, հիշ ֆարգընտա օլմագսըզըն, «եւ-
նի» թապիր օլունան էֆքեարըն ճէրէկանընա
գարըլտը: Թիճարէթ պէհանէսիլէ, մէզհէպէ
տիւշմէն օլան զաղէթալարա ապօնէ օլտու:
Եինէ — տայիմա օ իշ պէհանէսիլէ — մէզ-
հէպսիզ քիմսէլէրին պուլունտուգլարը դահ-
վէլէրէ կիտէրտի:

Սա մաֆիլ, գանաաթը զաթիյէսիլէ տէ-
սիլսէ տէ, ֆամիլեանըն ատէթինէ մուխա-
լիֆէթ իթմէմէք վէ վալիտէսինին էօլտիւլի-
վագըթ իթմիշ օլտուղը վատը թուլմագ ի-
չուն, բաղար կիւնլէրի պատարագա կիտէր
իտի... Զատիկ սրբութիւնըն հէր վագըթ

տիւշիւնտիւլիւ շէյլէրտէն տէյիլտի: Կէօյա
մէշղուլիյէթի բէք չօգ օլտուղընտան օ կիպի
շէյլէրէ սարֆ իտէճէք վագըթ պուլամայօր
իտի:

Վալիսէսի, նիքեանընըն իլք տէմլէրինտէ
իպատէթքեար իտի, վէղայիֆի տինիյէսինի
իճրա իտէրտի իսէ տէ, բէք տէ իլէրիսինէ
կիթմէգտի... Բաղար կիւնլէրի — միւմքին
մէրթէպէտէ — պիր գրսա պատարագ կէօ-
րիւր վէ Աւագ Հինգշարթի կիւնիւ տէ հա-
ղորդութիւն ալըրտը: Օգուտըղը քիթապլար
վէ պա խուսուս գուլլանտըղը լիսան չօգ
մագպուլ շէյլէր տէյիլլէրտի: Վագթըն էտէ-
պիյաթընա վէ թէաթրօ ալէմինէ վագըթ օլ-
մագ իսթէրտի: «Քէնտի գըյմէթինի թագտիր
էյլէյէն պիր գատըն ագըլը օլմալը տըր»,
տէր իտի:

* *

Պունլարըն պիր էվլատլարը օլտու: Հէր
իքիսի տէ «պու կիւն էվլատ եթիշտիրմէք
աղըր տըր, մասրաֆլը տըր, պօշունա սէֆիլ
էվլատ սահիպի օլմագտան իսէ, հիշ օլմա-
մագ տահա էյի տիր» տէյէրէք, պու սյիր
էվլատը քեաֆի սայարլարտը: Զաթէն անա
պապանըն օն էվլատը օլմուշ օլմասայտը պու
կիւն քէնտիլէր տահա գիյատէ գէնկին օլմա-
յաճագլարմը իտի...:

Պու պիր թանէճիք էվլատ աշխարհական-
լար թարաֆընտան իտարէ օլունան պիր մէք-
թէպէ գօնուլտը: Պունը չօճուղը պիր գա-
թօլիք մէքթէպինէ գօմագ միւմքին օլմատը-
ղընտան տէյիլ, օ մէքթէպ տահա եագըն վէ
տահա ուճուզ օլտուղընտան եարտըլար, գի-
րա պու կիւն ումումիյէթլէ պու նօգթայա
պէօյիւք պիր էհէմիյէթ վէրիլմէքտէ տիր:
Հէմ տէ «մէքթէպին մէքթէպտէն նէ ֆարգը
վար տըր» տէրլէրտի:

* *

Քեհսիսի մի: Հիշ պիր գանաաթը վիճ-
տանիյէսի Խօգ իտի իսէ տէ, հէր քէս իլէ
պէրապէր քէնտի տէ իլք հաղորդութիւնընը
ալտը:

Հէր նէ գատար ագըլը իտի իսէ տէ, չա-
լըմայը գաթիէն սէվմէգտի, չունքի գաթէն

պաշտան չըգործողը վէ պապաւոր հէր վագըթ իչին քէնտիսինէ բարա վէրէպիլիւր զանն ի տիյօրտը :

Հուգուգա տէվամ իթմէյէ պաշլատը , լաքին միւվէֆֆագ օլամատը . էյլէնմէքտէն վագըթ պուլամայօրտը քի չալըշայտը :


Չօնուգ հագգարգմի՛րյտը . . . պիլմէմ . . . Պուլընարղը մէքթէպտէ ծնա պու եօլտա թաւիմ վէրմիչլէրտի . էօլտիւքտէն սօնրա հէր շէյ պիթէր , պինաէն ալէյհ շիմտի վար իքէն էյլէնմէյի , զէվգ ու սէֆա իլէ կիւն կէչիւրմէյի . . . տէմիչլէրտի :

Մա մաֆիյհ , բէտէր վէ վայիտէսինին բիւնա վէ իպրամը իւզէրինէ արթըզ «նէթիճէ վէրմէյէ» բագի օլտու : Պիր գըզ լիսէսինտէ թայիմ ու թէրպիյէ կէօրմիւշ պիր գըզ իլէ էվլէնտի :

Պիր էվլատլարը օլտու իսէ տէ , թէրպիյէ իտէճէք վագըթլարը օլմատը , չուքի գարըսընը պրագմաղա կէօյա մէճպուրիյէթ հիսս իթտի : Քէնտիսինին կէրի տուրմագ իսթէմէտիյի պիր թագըմ սէրպէսթլիքլէրտէն գարըսընը վագ կէչիւրմէտիյինտէն տօլալը ծնը թէրք իթմէք ճիհէթինի իլթիզամ էյլէտի :

Մահքէմէ օնլարըն նիքեահընը ֆէսիս իթտի . . . Պուլըն իւզէրինէ քիւչիւք՝ պիր չօնուգ լիսէսինէ կիճէլի կիւնտիւզլիւ օլտրագ մէքթէպէ գօնուլտը . . . Օրատա ահատը պապասը վար օլտուղընը աշլայամատը պիլէ . . . մէզհէպսիզ պէօյիւտիւ . . . բրէնսիբսիզ պիր թայիմ կէօրտիւ . . . իլք հաղորդութիւն ալըպ այմատըղընը սօրմայա լիւզում պիլէ կէօրիւլմէտի :

(Մապաւի վար)



ԱՌ ԱՂԵՔԱՆԴԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Է ԶՄ Ի ԱՄՆԻ

(Շար.)

Բ . Ուրացեալք ոչ բնդունին գքահանայս և ոչ զխոստովանութիւնն՝ զի կանամբիս ունին ասելով : Երրորդ և ոչ առցեն զսրբութիւն քանդի ջուր ոչ գոյ խառնումն : Եւ երթիցեն ի ժամատուն Լաթինաց՝ և խոստովանին ի նոցունց՝ և առցեն բաժակ ի նո-

ցանէ : Զորրորդ մերձ ի սատակմանն կոչեն աղթարմա երիցունք՝ և արասցեն օծումն վերջի ծածուկ : Հինգերորդ մեզ պահան ուտեն ձուկ , և ոմանք ի նոցանէ ժժմունսւս ծովուց , և ոմանց միս : Պատճառելով զկերակունն ոչ պղծէ զմարդն : Եւ գինի յոլով : Հինգերորդ արասցեն զատիկ միապէս բնդ ֆոանսուզի չաքաթ մի յառաջ և կամ Բ . չաքաթն որպէս և պատահի՝ հետ այնորիկ կրկին մեզ հետ : Զերրորդ ի գինարբուս նըստեալ խնեչացեալ , և լեզու արձակեն ի Հայոց վարդապետացս և քահանայիցն , և զնախահարքն մեր հայհոյիլով՝ զվեղարն , զմորուս և սահմանող սուրբ պահոցս միթէ յազգն Լաթինացւոց յիմարք էին , որ ոչ ունին պաքս ծանորագիր : Եւ զայս ամենայն Ոհան Օծնեցւոյն ասեն կարգաւորեալ : Է . երրորդ Եւտիքէսեան չարաբարոյ համաբանին մեզ վասն միոյ բնութեանն ոչ գիտելով կոյրքն՝ եթէ գուզիղն ասի մի բնութիւն՝ և ոչ կարծիսն Եւտիքէից : Եւ հակառակին բնդդէմ մերոցս՝ ասեն , երկու բնութիւնս . Բ . կամս , Բ . խորհուրդք , և Բ . միաք , Բ . ներգործութիւն . և մի անձն և մի Քրիստոս : Ը . երրորդ զմարմին Քրիստոսի ասեն զոլ ապականացս և անսխառնոր՝ հետ յարութեանն ապա էառ գիսառաւորութիւնն : Թ . երրորդ զՔրիստոսի հոգին և մարմինն ուրանն և հրաժարին ոչ գոլ Աստուած . և այլն ուտէր և ըմպէր , այն որ ոչ ուտէ և ոչ պարունակի ուրեք՝ և սա պարունակեալ չըլէր յերուսաղէմ բնդ յառաքեալսն զիմրդ կարէ հաւասարիլ իբրեւ զնա որ զանեղն է և անպարագիր : Ժ . երրորդ երկնչին՝ եթէ Աստուած էր որ մեռաւ ի վերայ խաչին , Եւ այլ բանք զոր քաջդ պիտակդ ես զհերձմունս նոցա նեստորական կորստեամբ : Դարձեալ զկանայս և զաղջկունս ուսեալ սովորական բնութիւն հանապազ բնդանան եկեղեցին եւ վանքն Դաղմատացւոց՝ քան զի պատարագ տեսցեն , և խոստովանեսցեն ի ֆաթեբայիցն : Եւ նոքա զնոսա առցեն զսենեակ-յինքեանց ինքնազուլս մենարանի իւրում , քանզի ամաչեմք զխոստառակութիւն նոցա ի զիր արկանել : Եւ այս ժէ . ամէ յազգիս ա-

ւերածութիւնն նախ՝ զպատճառն ասեմք՝ զԿուսիշխանեցի Ռաշուրաց արեղայն որ քոլէ Յովսէփ վարդապետն վասն ոսկոյ ագահութեանն ետուր նմա գաւազան վարդապետական՝ եմոյժ զեկեղեցիս Հայոց և սկսաւ դարձուցանել նախ ոսկերիչ տեղացի գլխաւոր հեշտասէր իշխանացն՝ զի թիկունք լիցեն իւրն։ Եւ բերեալ զնա Դաղմատացուց ժամէն՝ առ եկեղեցիս Հայոց՝ քարոզեցէ, և որքան վարդապետաց մերոց գային քարոզել՝ եւ այն չար իշխանքն ի բաց հանեալ վարանէին ձեռամբ ժամակոյցացն՝ եթէ՝ մեզ բաւական է Աստուածաբան Ռաշատուր վարդապետն։ Եւ լուեալ ժողովրդեանս զնոսա, որ հակառակ լեալ յօրինաց Լուսաւորչին մերոյ, ամբոյս կուտեցան յարեան ի վերայ նորա ի մէջ եկեղեցւոյն՝ զի սպանցեն, եւ նա փախեալ եմուտ առ Փռանկս։ Եւ ժողովոյնցաք ամբոյսի՜ արդ արարաք թագաւորին եւ հրաման ել, ժողովեցին զԱխթարմայրն եւ արարին բրածեծ՝ եւ եղին ի քիւրէկն ի պատրիարքութեան Եփրեմ վարդապետին։ Յետ այնորիկ եղեւ Մխիթար վարդապետն Պատրիարք՝ եւ միաբանեալ ախթարմայից, կրկին եւս յարուցան Ախթարմայրն եւ տիրեցին զեկեղեցիս եւ եղեւ առաջնորդ Մինաս վարդապետն յերուսաղիմայ եւ կրկին անգամ ժողովուրդն արդ արարին թագաւորին, եւ ընկեցին զՄխիթարն եւ եղին զտեղի Մլքսեթ վարդապետն եւ արարին հաւածանս Ախթարմայիցն եւ Մլքսեթ պատրիարքն միաբանեալ ընդ նոսա։ Բերեալ զՌաշուրաց վարդապետն նոցին ի յեկեղեցիս Հայոց։ Եւ տեսեալ ժողովրդեան երրորդ անգամ ծանուցեալ զիրան Եպարքոսին։ Եւ ըմբռնեալ զերիս քահանայս Մլքսեթ պատրիարքին եւ եղին ի քիւրէկն, եւ եղին երկիցս անգամ պատրիարք զնոյն զԵփրեմ վարդապետն, եւ նա ծերացեալ եւ ոչ կարէր հաւածել եւ յանդիմանել զնոսա, զի վախեալ սարսափէր բայց ոչ միաբանեալ նոցա չարեացն, սակայն թոյլ էր և սիրող պատրիարքութեան։ Եւ ժողովրդեանս խորհուրդ մտեալ քննութեամբ. զիր մահսէր առաքեցին Կարնոյ քաղաքն և խնդրանօք բեր-

եալ զԱւետիք վարդապետն զի լուեալ էր համբաւ նորա ի մերս՝ որ խափանեալ էր ի նմին ժամանակի զխմորն Կարնոյ քաղաքին և քակեաց զժամատունն զոր ծածուկ չինեալ էին պատկերն. և զնոսա ետուր վարանել ի քաղաքէն. և դադարեցոյց զսոս վութիւնն ի ժողովրդենէ։ Եւ եղին Աւետիք վարդապետն պատրիարք. եւ նա տեսեալ զԵփրեմն ծերացեալ յոյժ զողորջուր զձեռան, և երկիցս եւ երկցս անգամ ասաց նմա գնալ յաթոռն էջմիածին և անդ ի ներքոյ ապաշաւանաց մեռանել ընդ հարցն քո բարի է քեզ. և նա ոչ կամէր բաժանել բարեկամացն և նա ետես անսխալութիւն նմա. եւ հհան հրաման Եպարքոսէն աքսորեաց մինչ սուրբ էջմիածին և անդ առեալ վախճան։ Եւ սարսեալ Ախթարմայիցն յոյժ ահացմամբ, և բազումք զոչեցին մեղա՝. Եւ կոչեաց զՀայոց վարդապետքն որք ոչ կարէին մտանել Եկեղեցիս Հայոց, ի ահէ չար իշխանաց և պատուէր եղեր վարդապետաց քարոզել զսահմանս հաւատոց լուսաւորչադիր յօրէնս։ Եւ զերիս Ս. Ժողովն եւ զԲաղկեդոնն։ Եւ ետես սուրբն Յակոբոս վանքն ի յերուսաղէմ Դժ. քիսէ պարտուց ներքոյ զբաւեալ՝ որք թոյլամորթ առաջնորդք, և չար իշխան արարեալ զայն։ Եւ ելեալ ծերակոյտ քրիստոնէիւք եւ վարդապետօք առ թագաւորն ծանոյց նմա չար իշխանաց էհվալն և Դժ. քիսէ պարտան, որ նոցա ձեռօքն եղեալ։ Եւ նոյն ժամ ել հրաման տիրեցէ Աւետիք վարդապետն զառաջնորդութիւնն յերուսաղիմայ և առցէ զառաջնորդ հրսապն և բարձի իշխանքն և արար այնպէս։ Եւ ամենեւին հատան ձեռք չար իշխանացն որ կողոպտէին յամ ամէ զգանձան սուրբ յերուսաղիմայ. և աւելուր զպարտան։ Եւ սկիզբն առեալ վճարել զպարտան սրբոյն Յակոբայ։ Եւ ի պատահմանէ բանսարկուին՝ մինչ թագաւորն Աղբիանուպոլիս էր եւ Կոստանդինուպոլսի Տաճկունքն յարուցեալ զօրօք բազմօք մինչ Ճիւ. հազար գնացին բազում զինու պատրաստութեամբ պատերազմ Անդրիանուպոլիս ի վերայ Սուլթան Մուսթաֆային։ Եւ թագաւորն ժողովեալ այնքան զօրք եկեալ առ

ճակատ միմեանց՝ առանց պատերազմի յաղթեալ ի կողմն թագաւորին և փախեալ։ Եւ յատուցին թագաւոր եղբայր նորին Սուլթան Ահմէտն և բերին Ստամպոլ, և ի նմին խառնակմանն այս յերուսաղեմայ կողոպտիչք չար իշխանքն տեղի առեալ վասն զի փոխադրեցան դատաւորքն և բռնաւորքն։ Եւ միաբանեալ ընդ Ախթարմա չար իշխանացն։ Եւ ետուն բազում կաշառս։ մինչ և քիսէ զի սպանցեն Աւետիք վարդապետն և նոր Եպարքոսի հրամանաւ ըմբռնեալ վարդապետն եւ զին թագաւորական բերդն զի սպանցեն։ Եւ Շէխ Իսլամն ոչ ետ գիր վճիռ սպանմանն կարդացող և ըրոհպանէ ասելով։ Եւ անտի աքսորեցին հեռի կղզի մի։ Կեցեալ և անդ թ. ամիս։ Եւ նորհնձա թագաւորն սուր եղեալ կոտորեաց այն զօրագլուխքն՝ որք յարուցեալ գնացին ի վերայ եղբօրն իւրում։ Եւ մերոց արզ արարաք թագաւորին և նա հրաման ետ Եպարքոսի իւրում ազատել զվարդապետն։ և ի յաքսորանացն դառնայ անդրէն յաթոռն իւր՝ և եղեւ այնպէս։ Եւ բազումք ի քրիստոնէիցս ի քիւրէկն եղեալ էին՝ յորժամ վարդապետն եղին ի բերդն, և ազատեցան նոքա։ Եւ այնք չար իշխանքն Հայոց փախուստ եղեալ կործանեցան տաժանակ մի՝ ոչ երեւէին յայտնի չրջիլ և ոչ կամէին հնազանդիլ ամբարտաւանքն։ Եւ կեցեալ յաթոռն ժե. ամիս։ Եւ չար իշխանքն կրկին յարուցին փորձանս եւ որոգայթ որպէս զսատանայական արհեստաւորութեամբ սկսան դարանել ներքուստ եւ ետուն Ըրայիսին կաշառս և ալոցն ամենեցուն մինչ և քիսէ։ Եւ այս ամենայն դարանակալութիւնն նոցա գիտէր վարդապետն բայց յողորմութիւնն Աստուծոյ յուսացեալ էր, սակայն ոչ գիտէր զինքն Փռանդատան գերմարեյն։ Եւ եկալ րմբռնեցին և աքսորեցին երկրորդ անգամ կղզի մի Պոհճա Ատա որ մօտ էր Ըստամպոլ։ Եւ յատուցին յաթոռն զիւր սիրելի փոխանորդ Մարտիրոս վարդապետն որ և իսկ նա յառաջագոյն միաբանեալ խորհրդող նոցա գայր հանապազ ի սիրտս իւր ցանկութիւնն խել զյաթոռն ծնողին իւրոյ և խորամանկ լեալ իբրեւ զՅուդա մատնեաց զվարդապետն իւր ի մահու տառապանաց։ Տեսանիցեն հերձուածողքն թէ զինչ գործեաց Լուսաւորիչ։

(Շարունակելի)

Ն Ս Ս Ս Ս

ՏՐԱԴԻՉՈՆ, 31 Մարտ 1914

Գերապայծառ Տէր,

Ներկայ նամակաւ կու գտնու մեր պօգանքը յայտնել այն հեթանոսներուն ու անհաւատներուն, որոնք մեր հասարակութիւնը քար ու քանդ ընելու և ճգմելու աշխատեցան։ Բարսեղ Ս. Բարսեղեանը, որ մարմնացումն է այդ զաղիր մտայնութեան, մօտեքս քաղաքիս մէջ պրօշիւր մը հրատարակեց Հայ Կաթոլիկ կղերի հոգեբանութիւնը անուամբ, որ իր և իր ընկերներու, Մալխասներու և Վարուժաններու հեթանոս և անխիղճ ըմբռնումներու ճշմարիտ մէկ արտայայտութիւնն է։ Այդ Բարսեղեան անուն ուրացող կաթողիկէն եւ անամօթ դաշնակցականը, չենք գիտեր ի՞նչ մարգարէութեան համար երկար ատենէ ի վեր հոս կը գրտնուի։ Կարծես հերիք չէին Մեծմուլայի պիղծ սիւնակներուն մէջ իր երկար ու երկար անճոռնի ազատամտութիւնները... հերիք չէին Ազատամարտի, ժամանակի, Բանբերի և այլուր ցփնած իր հակակաթողիկէ յօդուածները ու գրութիւնները։ հերիք չէր յօրեւեանի ատթիւ Կէտիկ-Փաշայի եկեղեցւոյ բեմէն հազարաւոր հերետիկոսաց ներկայութեան արտաբերած իր նսեմ խօսքերը, այժմ, նոյն սերմը ցփնել կը ջանայ վաւառի մաքուր և սրբակրօն կաթողիկէներու մէջ, որոնք իրենց հոգիովք փարած են իրենց կրօնքին ու անոր պաշտօնեաներուն։

Մենք, կը թողունք ձեզ, Գեր. Տէր, ամենաբարձր ու ճկուն ձեր քննադատական տողերու մէջ փշրելու այդ գրքոյկին գոյութիւնը, որ այդ ամսեղունկ և ոչ կաթողիկէները կաթողիկէ անուան տակ ամէն ոտնձգութիւն ի գործ չի դնեն։ Մեզ համակիր են գրեթէ բոլոր Հայ-Կաթողիկէները, որոնք պօգանքով կարդացին այդ անխիղճ պրօշիւրը։

ԽՈՒՄԱ ՄԸ ՃՇՄԱՐԻՏ ԿԱԹՈՂԻԿԵՆԵՐ
Յ. Գ. — Եթէ յարմար կը դատէք, հաճեցէք մեր նամակը հրատարակել։

ՆՈՅՆԷ

ԵՕԹՆԵԱՎ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՀԱՊԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԵՒ“ ԳՐՔԷՆ

ԳՐԻ Ա. — ԳՐ. Ի. — Առանձնաբերան ու լուսարկան սրբայն վրայ

(Շար.)

Ո՛ր ո՛ր ապահովութեամբ կը խնդայ՝ երե իր մէջ լուսնեայ թաղի խղճմանս վկայութիւնը:

Սակայն սուրբերու ապահովութիւնը միշտ լի է զաւ Աստուծոյ երկնային:

Անոնք, թեւ մեծամեծ առաքիլներէն են որոնք կը փայտին, սակայն եւ այնպէս բնաւ չեն լաւեցաւ իրենց փոքրն ու խոնարհութիւնը:

Իսկ յարեւոյժ ապահովութիւնը կը ծագի հպարտութենէ եւ յանձնապատասխանութենէ, ու կը վերջանայ ինքն զինքն խաբելով:

Բնաւ զուն ինքի ապահովութիւն մի՛ խոստանաւ այս կեանքին մէջ, թպեաւ թաւիկիտը կտրուաւ կամ չեղանակեց միայնակեաց համարուի:

ՍՐԲՈՒՀԻ ԹԵՐԵԶԻԱ

Վերջապէս ամէնքը համոզուեցան թէ Թերեզիայի ունեցած տեսիլքները Աստուծոյն են եւ սկսան հետը յարգանք վարուել: Թերեզիայի սուրբ ո՛րքը իրենցով կ'աճէր, եւ բարոյքէր: Աստուծոյ ալ օրէ օր աւելի մեծ շնորհքներով կ'օժտէր զինքը: Թերեզիայի ունեցած մտաւոր յափշտակութեանց մէջ, երբեմն մարմինն ալ գետնէն կը բարձրանար եւ օդին մէջ աւազուած կը մնար: Այս եղբայրութիւնը, ի մէջ այլոց, տեղի ունեցաւ անգամ մը ի ներկայութեան Աւիւրի եպիսկոպոսին, որ քաջած էր անոր հաղորդութիւնն ապրու: Այնպէս երկու տարի գրեթէ միշտ Յիսուս աւանդ ալ կողմը կը կենար, զանիկայ կը հրահանգէր, կը մխիթարէր, կը կողբարէր, իր սիրոյ մեծութեան արժանի գործքէ, ընելու կը խրատուէր: Յետոյ այս զգալի ներկայութիւնը փոխուեցաւ հրաշալի ընթերցանութեանն աստուածային երեք անձերուն, որոնք կ'երեւէին անոր, որչափ որ անմահ Աստուծոյ կրնայ երեւիլ գեռ մահկանացու արարածի մը: Այս բանն տեսեց տանուէրոր տարի եւ գրեթէ մինչեւ անոր մահը: Թերեզիայ ապաստուեցաւ նաեւ այցելութեամբ Ս. Կուսին, Ս. Յովսէփայ, Ս. Ս. Պետրոս եւ Պողոս առաքիլներուն, իւր Մարտիրոսներուն, Ս. Տոմէիկոսի, Ս. Յրանիսկոսի, Ս. Կստուրինէի, Ս. Գլարայի եւ ուրիշ բազմաթիւ սուրբերու եւ սրբուհիներու, որոնց անպատմելի հաճոյք մըն էր իրենց գերագոյն Տիրոջ Արեւհաշտի հետ խօսակցել:

Թերեզիայ ալ իր կողմէ կը ջանար ցոյց տալ Աս-

տուծոյ՝ իր սիրոյն նշանները: Այս միջոցին էր որ Կալվինականները կրօնաւորական կեանքը ջնջելու կ'աշխատէին: Թերեզիայ ձեռք զարկաւ զայն ծաղկեցնելու՝ վերահաստատելով Կարմեղոս-Լերան Տիրամօր Կարգը իր նախնական խոստովեան մէջ, ամբողջ եւ անթերի պահպանութեամբ այն կանոնին զոր տուած էր Երուսաղէմի պատրիարքը Ալբերտոս: Իր դիտաւորութիւնը յայտնեց նախ իրեն վանակից մի քանի առաքինի քոյրերու, որոնք հաւանութիւն յայտնեցին: Եւ հակառակ հազարաւէկ տագնապներու որոնց յաղթեց օժանդակութեամբ Աստուծոյ եւ Ս. Պետրոս Արկանդարացւոյն, յաջողեցաւ հիմնել Ս. Յովսէփայ վանքը, ուր խառնկրօն բոկազնայ Կարմեղոս հիի սքեմը տուաւ առաքինի չորս նորնծաւ օրհորդաց, որոնք յօժարեցան ճշգրիտ հետեւիլ կանոնին խոստովեան:

Կրօնական չափ հրաժարեցաւ այս նոր հաստատութիւնը կառավարելու ծանր հազը լոնտն առնելէ: Բայց չկրցաւ անկէ ազատիլ: Աստուածային ներշնչութեամբ մը սկսաւ ճշգրիտ որոշել այն ունեւ բաները, զորս պահելու էին իր հպատակները իրենց կանոնին նախնական ոգւոյն համեմատ սահմանեց անոր հետ լուսնութիւն պահել, յարատեւութեամբ պարտաւի պարտաւորութիւն, միւս չափով՝ բայց ի հիւանդութեան պարագային, խիստ ծով պահել Սեպտեմբերի Խաչի տօնէն մինչեւ Զատիկ, եւ տարւոյն մէջ ուրիշ շատ օրեր: Բոկոսն քալել ամառ ձմեռ, ճերմակեղէն չկրել, հագուել, պառկել, կերակուել շատ աղքատօրէն: Խրմբովին գուրցել ամբողջ ժամերգութիւնը, շատ ցանցաւ երթալ խօսարարներ, եւ այն տեղ մի միայն շատ մօտաւոր ազգականներու հետ տեսնուել: Ինքը, կարելի է թել, թէ իր հասարակութեան կենդանի կանոն էր, իր ճշգրտագոյնութեամբ, յատկապէս իր մշտնադանի, աղմուկներգութեան, հիւանդանոցութեան եւ անկան ամենախոնարհ ծառայութեանց մասին ունեցած հաւատարմութեամբ:

Հինգ տարի մեծ մխիթարութեամբ եւ անդորութեամբ այս Ս. Յովսէփայ վանքին մէջ մնաց: Բայց Յիսուս գեռ ուրիշ շատ բաներ կը սպասէր իր սիրելի հարսէն: Սր մը, երբ արտաստուածոր, թախանձագին կ'աղաչէր Աստուծոյ որ իրեն սիրտորոք հոգիներ վաստակելու միջոցներ ցոյց տայ: Աստուծոյ երեցաւ եւ բաւ: Սպասէ՛, դուստր իմ, եւ մեծ բաներ պիտի տեսնես: Եւ ինք շատ չանցած Կարմեղոսն ընդհանուր Մեծաւորը յոգորեց զինքը որ իր գործունէութեան սահմանը ընդարձակեւ երգածին չափ նոր վանքեր հիմնէ ոչ միայն աղջկանց, այլ արանց համար այլ Թերեզիայ բնաւ չընկրկեցաւ այս գծին: Գալ, բայց միանգամայն գեղեցիկ աշխատանքին առջեւ եւ հիմնեց քանիւ հինգ վանք:

(Շարունակելի)

ՆԵՂՈՒԿԻԱՅԷՆ

Սիրայոսթաւ կը զպենք այս գեղեցիկ նամակը, մասնաւորաբար շնորհաւորելով անոր քաղաքացի եւ ճշմարտապէս կարողիկէ հեղինակը, որ աշխարհակամ մըն է...

Ս. Խ.

Նւղոկիս, 8 Ապրիլ 1914

Կ. Պոլսոյ Աւագ Թեմին մէջ եկեղեցական իշխանութեան գէմ տեղի ունեցած ըմբոստութիւնը իր շարաշուք ազդեցութիւնն ունեցած է նաեւ Նւղոկիոյ Թեմին մէջ ունեց վրայ: Կ. Պոլսոյ Վարչական յորջորջուած բանադրեալ ժողովը, էջմիածնականներ, անկրօն Մեմուլա եւ Խարբերդի մէջ բանադրուած եւ ետքը պաշտօնով հոս փոխադրուած անհատ մը, ամէն ճիգ թափած են որպէս զի մղեն տեղւոյս հասարակութիւնն ալ ընդգլմ իր հովուին եւ այս գրգռումները մասամբ իրենց չարագուշակ հետեւանքն ալ ունեցած են, որով կարգ մը անձեր ներկայանալով Արհի. Լեւոն Արքեպ. Քէչէճեանի, պահանջած են որ եկեղեցւոյ սրբազան իրաւունքներուն անփոխարին պաշտպան կանգնող Գեր. Պօղոս Վ. Բօլատեանը այլ եւս փոխանորդ չըլլայ, վարչական ժողովին մէջ եկեղեցական անդամ չգտնուի եւ եկեղեցւոյ կալուածներուն վարձակալութեան պայմանագրութիւնները ատորագրէ ժողովէն աշխարհական անձ մը: Եկեղեցւոյ սկզբունքներուն հակառակ եղող այս պայմանները անշուշտ չընդունուեցան Արհի. Արքեպիսկոպոսէն եւ վերոյիշեալ առաջարկութեանքն ունեւ իրրեւ թէ ազգին քուէովը ընտրուած են՝ իրենք իրենց վարչական ժողովի մը հանգամանքը տալով առանց թեմակալին հաստատութեան՝ կալուածներու մատակարարութեան միջամուխ ըլլալ սկսան: Ասկէ դատ, Արհի. Գեր. Տիրոջ պաշտօնանկութիւնը խնդրելու համար Սերաստիոյ կուսակալին դիմեցին. տեղւոյս կառավարիչին առջեւ ի ներկայութեան փոխանորդ Պօղոս Վ. ի, այս վերջինը եւ նորին Արհի. Տէրութիւնը անարգեցին՝ ըսելով թէ ազգին եկամուտները կ'իւրացնեն, փոխանդիմ վրայ վստահութիւն չունին եւ զայն չեն ճանչնար. վերջապէս ուղեւորն որ Արհի.

Արքեպիսկոպոսը զիրենք իբր վարչական ժողով հաստատէ եւ իրենց Զանքերուն ի գերի ելլելուն վրայ ժպրհեցան վերոյիշեալ ասորիներ զործերուն ձեռնարկել: Ահաւասիկ կաթողիկէներ որ չեն վախնար Աստուծմէ եւ չեն ամենար մարդոցմէ: Այսուհանդերձ կը պնդեն թէ իրենք ճշմարիտ կաթողիկէներ են եւ յարած կաթողիկէութեան օրէնքներուն հաւատքի մասին, մոռնալով թէ ամէն ճշմարիտ կաթողիկէ եկեղեցւոյ հնազանդութիւն կը պարտի հաւատքի, բարոյականի եւ բարեկարգականի մէջ եւ ով որ իր եպիսկոպոսին հետ չէ Հոռոմի հետ չէ ու հետեւաբար կաթողիկէ եկեղեցիէն դուրս կը գտնուի: Իրենց բնարան ըրած են թէ եկեղեցւոյ կալուածներու մատակարարութիւնը ազգին կը պատկանի եւ կղերին պարտականութիւնը միայն պատարագել, քարոզել, մկրտել, պսակել է եւայլն: Ինչ զարմանալի մտայնութիւն: Չեմ գիտիր այդ ապստամբները ո՛ւրկէ կ'առնեն այդ ծուռ գաղափարները. եթէ կ'ուզեն մեր մէջ ալ մտցնել էջմիածնական եկեղեցիին զեղծ սովորութիւնները, աւելի լաւ կ'ըլլար եթէ իրենք էջմիածնականութեան դիմէին, ուր կը յուսան պտնել կատարեալ ժողովրդավար եկեղեցի, որովհետեւ ապահով թող ըլլան որ Ս. Քահանայապետը ունի աշխարհիս վրայ չուրջ չորս հարիւր միլիոն ժողովուրդ որ ամենայն հնազանդութեամբ կը հետեւի կաթողիկէ եկեղեցւոյ աստուածատուր օրէնքներուն եւ ափ մը Հայ-կաթողիկէներու քմահաճոյքին համար Հոռոմ չի կրնար զոհել այդ սկզբունքները: Բրիտանոսի աւանդը անաղարտ պահելու համար ահագին կառավարութիւններու գիտադրած է ան: Բրիտանոս իր եկեղեցւոյն մէջ կարգ մը հաստատած է եւ յանձնած է ամէն իշխանութիւն իր Առաքեալներուն եւ անոնց յաջորդները եղող Ս. Քահանայապետին ու եպիսկոպոսներուն. ուրեմն Բրիտանոս իր եկեղեցւոյն թէ՛ հոգեւոր եւ թէ՛ ժամանակաւոր գործերուն հաշիւը աստուծմէ կը պահանջէ. հետեւաբար Ս. Քահանայապետը եւ եպիսկոպոսները չեն կրնար ուրիշներու յանձնել իրենց ուսերուն վրայ ծանրացած այդ ահագին պատասխանատուութեան:

Թիւնը, եթէ սովորութիւն եղած է ժողովուրդէն ոմանց Եկեղեցւոյ ժամանակաւոր գործերուն մասնակցիլ տալը՝ այդ ալ պարզապէս եկեղեցականներու արդէն ծանօթ եղող գործը թեթեցնելու համար և այդ սովորութիւնը իրաւունք մը չի կազմեր ի նպաստ ժողովուրդին, այլ միայն չնորհք մը։ Բրիտանոսի ճշմարիտ այսինքն կաթողիկէ եկեղեցւոյն պաշտօնեաները ժողովուրդին պաշտօնեաները չեն ինչպէս էջմիածնականներուն, այլ դրուած են ժողովուրդը կառավարելու հոգեւորապէս, և այսպէսով իրենց իշխանութիւնը կը ստանան մի միայն Աստուծմէ և ո՛չ երբեք ժողովուրդէն։ Կը հետեւի ուրեմն թէ այդ անձերուն ընթացքը պարզապէս բնորոտութիւն մըն է Եկեղեցւոյ իշխանութեան և սեպհականութեան իրաւունքին դէմ։ Այս բնորոտութեան հիմը կը կազմեն ռամկավարական սկզբունքները որ կը տիրեն Բրիտանոսի Եկեղեցիէն զատուած եկեղեցիներուն ինչպէս էջմիածնականին մէջ, ուր արգարեւ զլուխը ժողովուրդն է որ կ'անուանէ պատրիարքները, առաջնորդները, ժողովուրդն է որ զանոնք պաշտօնանկ կ'ընէ և կը դատէ։ Իսկ Բրիտանոսի եկեղեցին եղող Կաթողիկէ Եկեղեցւոյն մէջ ամէն իշխանութիւն կը ըլլի Բրիտանոսի Փոխանորդը՝ Հռոմի Քահանայապետէն որ ունի լրումն իշխանութեան։ Պատրիարքներու, եպիսկոպոսներու ընտրութեան մէջ ժողովուրդին մասնակցութիւնը պարզ թափ վկայութիւն մըն է զոր Ս. Քահանայապետը աղատ է նկատի առնելու կամ չառնելու։ Հակառակորդները յառաջ կը քշեն թէ կալուած մատակարարելը եկեղեցւոյ իրաւունքը չէ, ան՝ հոգեւոր իշխանութիւն մը ըլլալուն համար։ Ի՞նչ անարամարանական գաղափար։ Ընթէ եկեղեցին իր պաշտօնունքին պէտքերը հոգալու չէ՞, իր պաշտօնեաները ապրիցնելու չէ՞ և ինքն ալ իբր կազմակերպիչ ընկերութիւն մը իր նպատակին հասնելու համար ամէն օրինաւոր միջոցները գործածելու իրաւունք չունի։ Կարծեմ ասոնց վրայ ծանրանալը աւելորդ է, ըմբոսանին ալ լաւ գիտեն այս կէտերը և եթէ հակառակը կը պնդեն այս ալ

իրենց թաքուն մտքերուն միջոց մըն է, որ է Եկեղեցին ստրուկի մը վերածիլ։

Ըմբոսաներուն այս արարքները որ մեծ զգրգում պատճառեցին անխիղճ և հակաթողիկէ Մեմուլայի և անոր չար ոգւով տագորուած էջմիածնական թերթերուն՝ մենք պարտք կը զգանք իբրեւ մեր երջանկայիշատակ նախնիքներուն ունեցած այն բարի և ողջամիտ, աւանդական, ատկուն հաւատքէն սերեալներ, դատապարտելու քանի մը չարամիտ եւ եկեղեցադաւ անձերու արարքը, որոնք շատերու պարզամտութենէն եւ սրտի երկչոտութենէն օգտուելով կ'ըմբոստանան եւ այսպէս վարկաբեկ կ'ընեն այն հայրենիքը որ որդւան եղած է մեծահոգի հայկապ եւ առատաձեռն կաթողիկէներու, որոնց բարի համբաւն ու պատիւը օրհնութեամբ կը յիշուի դեռ օտարներէ և հիմակուան նորելուկ փոքրահոգիներուն վատ ընթացքը միշտ կը դատապարտուի։

Յ. ԳՈՒՐՈՒՊԱՆԸՔԵԱՆ

ՍՅՈՒՆԱՅԼՔ

ՀԱՆՔԱՅԻՆԱՅԻՆ ԴԱՐՈՒՆ ԿԼԻՄԱՆ. — Երկրիս խորերէն ելած հանքածուխը յառաջ կու գայ տաք եւ խոնաւ կլիմայի մը տակ բուսած տունկերէ, ուրոնց դիպումը միացարկները ըստ մասին խորութեան ջրի յաճախ նոսր խաւի մը ներքեւ, յետոյ տալաւ ծածկուած են սիկի առաւել կամ նուազ թանձր խաւերով, որոնց նմանները կը կազմուին լիճերու եւ ծովերու սփամերձ կողմերը՝ շրջակայ երկրներէն քշուած բերուած հողերէ։ Որովհետեւ հարկ է համոզուել քր մեր ցամաքը, գրեթէ ամբողջովին, շատ անգամ ծածկուած է ովկիանոսներու կամ ծովերու ջրերով։

Ո՞ր դարուն տեղի ունեցած են այս մթերքները։ Հանքածուխը կազմուած է երկրաբանական զանազան դարերու մէջ, բայց գլխաւոր մթերքները կը վերաբերին յատկապէս ածխաբեր ըսուած դարուն, որ երկրաբանական նախնական թուակաւին մաս կը կազմէ։ Ըսել է թէ հանքածխային դարը կը հասնի առասպելական հնութեան մը, մահաւանդ թէ աւելի քան առասպելական, որովհետեւ այն միջոցին մարդ չկար որ առասպելներ հրեանքէր կամ պատմէր. երկրիս վրայ կը գտնուէին մի միայն մեր այժմ տեսածներէն շատ տարբեր կենդանիներ, դաշտերը զարդարող ծաղկաւեղ

տունները դեռ եւս չկային: Եթէ խնդրենք երկ-
րախօսներէն այս հանքածխային ժամանակամիջո-
ցին թուականը, մեզի միլիոնաւոր տարիներով կը
պատասխանեն: Դժուար է որոշել դարը թէ՛ այս
մթերքներուն կազմութեան եւ թէ՛ անոնց առած
զանազան վիճակներուն:

Սակայն հետզհետէ մանրազնին ուսումնասի-
րութեամբ հանքածխային մթերքներու եւ քննու-
թեամբ այժմ երեւան եկող առաւել կամ նուազ
նման մթերքներու՝ երկրաբանները յաջողիւ են
աւելի վճիտ գաղափար մը կազմել հանքածխային
դարուն անցուդարձերուն եւ անոր կլիմայական
պայմաններուն վրայ:

Հանքածխային դարուն բուսականութիւնը,
յայտնի է որ, շատ ճոխ եւ առատ եղած է. բայց
ածխային բազմութիւ շարքեր՝ բնական եւ օգերե-
ւութեան շատ նպաստաւոր պայմաններուն տակ
միայն կրցեր են կազմուիլ:

Այս պայմանները վերջերս շատ որոշ կերպով
ամփոփուած են Բառնէի կողմէ:

Հնատնկաբանք առհասարակ կ'ընդունին թէ
այն դարուն կլիման բաւական ջերմ եւ խոնաւ ե-
ղած է. սակայն պէտք չէ կարծել թէ այդ խոնա-
ւութիւնը ծայրայեղ աստիճանի մը հասած է. ու-
րովհետեւ կ'երեւի թէ նոյն դարուն մթնոլորտը
շարունակ մառախլապատ եւ կիսովին թափանցիկ
չէ եղած, ինչպէս կը կարծեն ոմանք: Եւ իրօք
հանքածխային տունկերու տերիւններուն վրայ նըշ-
մարուած շերտաւոր հիւստեւածքները կերպով մը
ցոյց կու տան թէ այն տերիւնները լոյսի ուղղակի
ազդեցութեան ենթարկուած են:

Այս կլիման միակերպ եղած ըլլալու է. որովհ-
հետեւ երկրագունդիս մեծ մասին վրայ կը գըտ-
նուին ո՛չ միայն միեւնոյն սեռերը, այլեւ միեւ-
նոյն տեսակները: Շահեկան է նկատի առնուլ նաեւ
թէ հանքածխային բոյսերը աճման կամ տարեկան
գօտիներ ցոյց չեն տար, որմէ կը հետեւի թէ
այս բոյսերուն սպրած ասենը բուսականութեան
համար դադարման կամ դանդաղման ժամանակ
չկար. այն ժամանակամիջոցին պայմանները շատ
նման էին այժմու մեր արեւադարձային երկրա-
մասերուն պայմաններուն, եւ հաւանականաբար
կը տարածուէին ամբողջ երկրագունդին վրայ:

Ուստի կը յանգինք սա եզրակացութեան թէ՝
հանքածուխը կազմուած է արեւադարձական,
կիզահողային ճահիճներու մէջ, որոնց նմանները
վերջերս երեւան եկան ձաւայի, Սումաթրայի,
Պոլուէոյի եւ նոր կուինայի մէջ: Ասոնցմէ մին՝ 12
հազարամէդր լայնութեամբ կը տարածուի Բամ-
բար գետին ափին վրայ եւ 80,000 արտավար տեղ
կը գրաւէ. ասիկա անտառ մըն է 25—35 մէդր
բարձր, բազմատեսակ ծառերու, որոնք իրարմէ
բաժնուած են կարճ ծառերու պուրակով մը եւ
զանազան տունկերով: Այս տեսակները թէեւ հա-

մադրութեան կողմէ հանքածխայիններուն հետ
նմանութիւն կամ յարաբերութիւն մը չունին, սա-
կայն համեմատութեան ինչ ինչ հետաքրքրական
կէտեր կ'ընծայեն: Այս անտառին ջուրը թուի է,
բայց ականակիտ, ինչպէս մեր բարեխառն գաւառ-
ներու կիզահողահանքերունը. շնորհիւ այս ջուրին,
եւ եղծումով՝ դիզուած բուսական մեացորդներու,
կը կազմուի իսկ մը բուսական նիւթի եւ կը փոխ-
ուի բուսահողի որ 9 մէդր թանձրութեան կը հաս-
նի. ասիկայ ճշմարիտ կիզահող մըն է, որ համե-
մատական մեծ նմանութիւններ կը ներկայացնէ
բրածոյ, բուսահողական ածուխներու եւ յատկա-
պէս հանքածուխի հետ:

ԸնՏիր ԽՕՍԱԿԱՌԻԹԻՆՆԵՐ. — Ես կը հաւա-
տամ հոգեփոխութեան եւ համոզուած եմ որ, մեռ-
նելէս յետոյ, հոգիս շիփ շիտակ պիտի երթայ ան-
բանի մը մարմնոյն մէջ:

— Այդ բանին համար մեռնելու պէտք չու-
նիս, արդէն եղած լմեցած է:

— Հա՛յրիկ, ի՞նչ է ազատամիտը:

— Զաւակս, ազատամիտը մարդ մըն է որ կը
պահանջէ որ ամէնքը իրեն պէս մտածեն:

Ակումբի մը մէջ, ուր քահանայ մը կը գըտ-
նուէր, տիկին մը կը պարծենար իր անհաւատու-
թեան վրայ: Քահանան անոր հարցուց.

— Տի՛կին, Ս. Գիրքը կարդացե՞ր ես:

— Ո՛չ, Հա՛յր սուրբ:

— Կրօնագիտութի՞ւն:

— Բնա՛ւ:

— Քարոզներու, քրիստոնէական վարդապե-
տութեան ներկայ գոյնուե՞ր ես:

— Ամենեւի՛ն:

— Կրօնական-փիլիսոփայական երկեր իմաստա-
սիրե՞ր ես:

— Ո՛չ երբե՛ք:

Խօսակցութիւնը կը շարունակուի եւ քահանան
կը տեսնէ թէ տիկինը մի քանի ջնջին վէպերէ եւ
ամբարիշտ լրագիրներէ ուրիշ բան կարդացած չու-
նի, սւստի կ'ըսէ.

— Տի՛կին, վստահ եղի՛ր որ դուն անհաւատ
չես:

— Հապա ի՞նչ եմ, Հայր սուրբ:

— Տի՛կին, դուն տխուր ես:

Ուստի դուք կը հաւատաք որ կայ երկինք մը,
դժոխք մը:

— Անտարակոյս... եւ երկուքին միջեւ ալ քա-
ւարան մը:

— Ըսել է թէ դուք վարձքի՛ յոյսով բարեք
կ'ընէք:

— Ո՛չ, այլ Աստուծոյ համար որ զիս պիտի վարձատրէ:

— Իսկ ես բարիք կ'ընեմ ընդդէմ անշահախնդիր կերպով, ես կ'աշխատեմ, կը գործեմ պատուի համար:

— Ի՞նչ կրնամ ըսել. մարդիկ տուհաճարակ կ'աշխատեն ստանալու ինչ որ իրենց կը պակսի:

Անգղիոյ դարձին համար աշխատող կաթողիկէ քարոզիչ մը, հրաւիրուեցաւ անգամ մը բողոքական տիկնոջ մը քով, որ անոր ըսաւ.

— Վա՛րդապետ, տեսիլքներ կ'ունենամ:

— Իրա՞ւ. եւ զո՞վ կը տեսնես այդ տեսիլքներու մէջ:

— Հայրն ու Որդին:

— Ստէպ կը պատահի՞՞ այդ:

— Ամէն երեկոյ:

— Ժամը քանիի՞ն:

— Ընթրիքէս անմիջապէս վերջը:

Այս վերջին խօսքերը լոյս մը ծագեցին քարոզիչին մտքին մէջ, ուստի հարցուց.

— Տի՛կին, ընթրիքի ատեն ի՞նչ կը խմես:

— Երկու սրուակ գինի:

— Տի՛կին, այսուհետեւ երեք սրուակ խմէ՛ եւ պիտի տեսնես ո՛չ միայն Հայրն ու Որդին այլ նաեւ Ս. Հոգին:

Երկու գործաւոր կը խօսակցին... ու բնականօրէն խօսակցութիւնը կը դառնայ կրօնքի եւ ժողովրդապետաց վրայ...

— Ես, կ'ըսէ մին, հակակոյն եմ եւ ասոր համար կը պարծիմ...

— Կրնաս, կը պատասխանէ միւսը, դուն կրնաս ուղղափառօրէն խօսիլ: Բայց կը ճանչնաս արդեօք ճշմարիտ հակակոյնները...

Հրեաներ հակակոյն են.

Ճրանմանները հակակոյն են.

Անաստուածները, անխաբիւսները հակակոյն են.

Մարդասպանները հակակոյն են.

Սասանան մահաւանդ հակակոյն են:

Ահա՛ բարեկամ, աղէկ ընկերներ ունիս: Կեցի՛ր ատոնց հետ եթէ հաճելի է քեզ: Ես լաւ կը համարեմ հեռու կենալ ատոնցմէ:

ՀԱՆՔԱՅԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ ՎԱՐԺԱՐԱՆԸ

(Ասորիքի Ֆոէր Մարիքներու գաւառական Մեծաւորին մէկ տղայի պատմութիւնը)

Հալէպ այժմ ունի 200,000է աւելի բնակչութիւն, որուն իբր 150,000ը իսլամ է, 25—30,000ը Կաթողիկէ (հայ, յոյն, ասորի, մարոնի), 15—20,000ը՝ հերետիկոս, և 10—12,000ը՝ հրեայ:

Հալէպի Կ. Հայոց վարժարանը, որ այժմ նոյն քաղաքին ամենէն լաւը կը համարուի, 1904էն ի վեր յանձնուած է Ֆոէր Մարիքներուն վարչութեան, և յարաճուն յառաջդիմութեամբ օժտուած ընթացք մը ունեցեր է, ինչպէս յայտնի է պաշտօնավարող ֆոէրներուն և ուսանողաց թիւին շարունակ բազմանալէն: 1904—1905 երեք Ֆոէր և 30 ուսանող միայն ունէր վարժարանը, մինչդեռ 1912—13՝ 9 ֆոէր և 300 ուսանող, 1913—14 տարեյշջանին համար Արհի. Սայեղեան Արքեպիսկոպոսը ֆոէրներու թիւը բարձրացուցեր է 12ի:

Վարժարանը աւելի արագ զարգացում մը կ'ունենար եթէ կարելի ըլլար աւելի բազմացնել ուսուցչական մարմնոյն անդամները. այս բանին արգելք կ'ըլլան նախ՝ տրամադրելի անձներուն չգոյութիւնը, և երկրորդ՝ այլեւայլ կողմերէ եղած ընդդիմութիւնը: 1912ի Սեպտեմբերին սկիզբէն ներկայացող ուսանողներէն 60—80 շուրջ մերժուած են տեղւոյ և մանաւանդ ուսուցչի չգոյութեան պատճառաւ: Մերժուածները՝ մասնաւորապէս ոչ-կաթողիկէներն էին:

1910ին վարժարանին մօտ կառուցուեցաւ աւերող շէնք մը: Բայց այս շէնքն ալ անբաւական է. և հիմայ հարկ կը տեսնուի աւելի ընդարձակել վարժարանը կամ խոնարհագոյն կարգերը ուրիշ մօտակայ տեղ մը փոխադրել:

Արհի. Սայեղեան Արքեպիսկոպոսը ամէն կերպով հոգ կը տանի իր վարժարանին զարգացման և շատ գոհ է հոն անձնակազմէն:

Վարժարանը թէ՛ հոգեւորապէս և թէ՛ մտաւորապէս գերազանց վիճակ մը ունի: Ուսանողները ամէն օր սուրբ պատարագը կը տեսնեն եւ սուրբ քիւսով կը քաղուին:

Վարժարանին 300 ուսանողներէն (1913 Մարտ) 260ը կաթողիկէ է, 5ը՝ հրեայ, 3ը՝ իսլամ, 30ի չափն ալ հերձուածող:

— Նոյն վարժարանին հին աշակերտներէն 30—40 հոգի կապած են բարակաշտական ընկերութիւն մը: Ամէն կրթական հարկաւորները պատարագ տեսնելէ և հա-

ղորդուելէ յետոյ չորսական կամ հինգական հոգիէ բաղկացած խումբերու բաժնուած կ'երթանք քաղքին այլեւայլ թաղերը և խեղճ, պղքաս, թշուառ, լքեալ տղաները ժողովելով ժամ մը, և երբեմն երկու ժամ կը սորվեցնեն անոնց կաթողիկէ կրօնքին վարդապետութիւնները, և զանոնք կը պատրաստեն Ապաշխարութեան եւ Հաղորդութեան սուրբ փորձուրդներուն:

Զանոնք յանկուցանելու համար անոնց կուտան բարենիշներ, ներկայութեան, փութալնութեան տոմսեր, որոնք ապա կը փոխանակուին պարգեւներով. պատկեր, վարդաբան ևն... եւ երբեմն ալ զգեստ:

Պէտք եղած դրամը հայթայթելու համար՝ այս երիտասարդները վճարումով երեկոյթներ, պերեկոյթներ կուտան, երբեմն ալ հանգանակութիւն կ'ընեն ի նպաստ իրենց պաշտպանեալներուն: 800 տղանքէ աւելի ամէն կիրակի այս կերպով կ'ուսանին իրենց կրօնական պարտքերը, զորս բացարձակապէս պիտի անգիտանային առանց այս միջոցին:

Այս կամաւոր կրօնուսոյցներուն որ 18—25 տարեկան երիտասարդներ են, կը միանան փրենց դեռ եւս ուսանող կրտսեր եղբայրներէն անոնք որ իրենց ընտիր վարժով, քարեպաշտութեամբ և հապակով արժանի եղեր են նոյն պատուին: Այս երիտասարդներէն շատերը Հալէպի ամենէն ճոխ եւ ամենէն ազդեցիկ ընտանիքներէն են, որով իրենց անձնանուիրութիւնը աւելի արդիւնաւոր կ'ըլլայ: Իրենց մէջ կը գտնուին հայեր, լատիններ, մարոնիներ, յոյներ, քաղղէսցիներ, ասորիներ, որոնք իրարու հետ միացած են կաթողիկէութեան գերազգային նուիրական կապով. ինչ գեղեցիկ, ինչ հետեւելի օրինակ...:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՈՌԾ ԵՒ ԿԱԹՈՒԼԻԿԷ ԱՇԽԱՐՀ. — Ս. Զատկի օրը Հռոմի առաքելական պալատին շրջափակին մէջ մասնաւոր արարողութիւն մը տեղի չունեցաւ:

Ս. Հայրը իր առանձնակոն մատրան մէջ պատարագ մատուց՝ ի ներկայութիւն իր ծեղունի եղբօր և երկու կրտսեր քոյրերուն, և իր երէց քրոջ աղջկան: Պալատինեան գունդը, քահանայապետական ասիկան զինուորաց վաշտը, և զուեցեցի պահակախումբը կէս պաշտօնական զգեստ հագած էին նոյն օրը և ընտիր կտորներ նուագեցին: Քահանայապետական դրօշը կը ծածանէր Ս. Իամատոսի բակին վերեւը:

— Զատկի երկրորդ օրը Ս. Քահանայապետին կողմէ սկսան հանգիստաւորապէս լնդունելի խումբ խումբ իտալացի և օտար ուխտաւորներ, որ Հռոմ եկած էին Ս. Յարութեան սօնին առթիւ:

Ս. Հայրը՝ Իրոյմի Ս. Խորհուրդը տուաւ վատիկանի մօտ Ա. սարիական դեպան Զովհաննէս Շէնս պօռկ—Հարթէնչու այս իշխանին որդւոյ: Արարողութիւնը տեղի ունեցաւ փոքր քահանայահայր մէջ:

Փորթ ուկրաին քսորեալ Պատրիարքը վերագարձաւ Լիւպոնի Այս քաղաքին կաթողիկէները ի նշան իրենց ուրախութեան Ն. Ամենապատուութեան ընծայեցին մեղեմիկի շքնաղ մատանի մը, որուն վրայ դրոշմուած է արքեպիսկոպոսական խաչ մը, շուրջը կը գտնուի երեսուն հատ աղաւոր աղամանդ: Այս գահարը կը կրէ Պատրիարքին հանգիստաւորապէս Լիւպոնի մասելուն թուականը:

ՀԱՅ-ԿԱԹՈՒԼԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿՍՈՒՆ. — Զատկին Ուրբաթ, Շաբաթ օրերը և Նոր Կիրակին Ս. Աստուածածին Աթոռանիստ եկեղեցւոյ մէջ Սրբութիւն ի Բազմոցի դրուեցաւ և առաւօտեան երեկոյեան ժամերգութիւն և Ս. Հաղորդութեան վրայ քարոզներ տեղի ունեցան: Նոր Կիրակին առաւօտը կատարուեցաւ առաջին հաղորդութեան հանդէսը նոյն եկեղեցւոյ մէջ, որ լի էր հոծ բազմութեամբ: Խմբաբան ալ կողմը, դասին անմիջապէս ետեւը, գրաւած էին սպիտակազգեստ օրիորդներ: Իսպին մէջ էին Վեներաբլի Սրբութեանց Բերալի դպրոցին աշակերտները: Պատարագեց Արհի. Զովսէփ Արքեպ. Խորհուրդն Կ. Պատրիարքական փոխանորդը՝ ընթերցողապետութեամբ երկու սարկաւադներու: Ճաշակումէն անմիջապէս վերջը, Ն. Սրբապատուութիւնը ներշնչալ խօսքերով բացատրեց Ս. Հաղորդութեան Խորհուրդին գերազանցութիւնը, և զայն օգտակարապէս ընդունելու պայմանները, և նոյն Սուրբ Խորհուրդին սիրով վառեց ամենուն, յատկապէս առաջին անգամ՝ հաղորդուողներուն սիրտերը: Ապա Ն. Արհիպատուութեան ձեռքով հաղորդուեցան, առաջին հաղորդութիւնը առնողներէն զատ բազմաթիւ արք և կանայք՝ պատկառազու կազապահութեամբ և յուպիջ ջերմեանս:

դուժեամբ Թ. Հաղորդութեան մատակարարութիւնը կէս ժամէն աւելի տեւեց, որ միջոցին զպիւրնեւը ներ-
դաշնակօրէն երգեցին ընտիր սաղարք եւ շարականները
Նոյն օրը՝ երեկոյեան ժամերգութիւնը կա-
տարուեցաւ նախագահութեամբ Արհի. Ռոքոսեան
կ. Պատր. Փոխանորդ. Գերապոյժաւին: Յետոյ թա-
փորի հանուեցաւ Ս. Հաղորդութիւնը: Հանդիսա-
դիրն էր Արհի. Սիւլեան Գերապոյժաւը: Եկեղեցւոյ
մէջ սաեղ ձգելու տեղ չկար: Ներկայ էին բազմա-
թիւ քահանայներ: Թափորը վեհաշուք կարգաւորու-
թեամբ, արարողութեան բովանդակ փառաւորու-
թեամբ ելաւ աւանդատան դռնէն, եւ եկեղեցւոյ
չորսուկէն անցնելով եկեղեցւոյ մտաւ աւագ դռնէն:
Ս. Հաղորդութեան օրհնութեամբ փակուեցաւ հան-
դէսը:

Մարաշի Վսեմաշուք կառավարիչը հիմն վէճ,
որ Խարիչ քրատ ուղեւորութեան կը վերադառնար,
երեքշաբթի օրը ընկերակցութեամբ Հ. Կաթողիկէ
օսմ. երեսփոխան Վսեմ. Յակոբ էֆ. Խալաֆեանի
այցելութիւն տուաւ Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ
կէս ժամի չափ սրբալի խօսակցութիւն մը տեղի ու-
նեցաւ: Ն. Գերեջանկութիւնը շնորհակալութիւն
յայտնեց Վսեմ. Կառավարչին յատկապէս այն փո-
քերուն համար որ յոյց տուած էր նա Վսեմ. Խու-
լաղեան էֆ. ընտրութեան գործին մէջ, եւ ինքրեց
որ Մարաշի կ. Հայոց նկատմամբ ցարդ ունեցած
մասնաւոր խնամքն ու հոգածութիւնը շարունակէ:
Վսեմ. Կառավարիչը խոստացաւ ամէն կերպով կա-
տարել Ն. Գերեջանկութեան բաղձանքը եւ շատ գոհ
տպաւորութեան տակ մեկնեցաւ:

Լիվոռնոյի Հայ կաթողիկէ հասարակութիւնը
այս միջոցին կը պատրաստուի ստեղծել երկու հարիւ-
րամեակը տեղւոյն Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեց-
ւոյն, զոր երկու դար առաջ իրոյն քաղաքը գտնուող
հայազգի հարուստ վաճառականներ կանգնեցնե-
ն Տէլ—Մանթապիտ տնտէսով ճարտարագետի մը յա-
տակաբար համեմատ:

Ինչպէս ուրիշ անգամ ծանուցած ենք թերթին
մէջ, այս հարիւրամեակին հանդէսները պիտի տեւեն
ամբողջ շաբաթ մը Մայիս 3էն մինչեւ 10:

Մայիս 3ին, կիրակի օրը պիտի բացուի հանդէսը
ձայնաւոր պատարագով զոր պիտի մատուցանէ Ար-
հի. թեմական Եպիսկոպոսը: Երկրորդ օրերը յոյն, ա-
սորի, լատին արարողութիւններով պատարագներ եւ
ժամերգութիւններ, քարոզներ տեղի պիտի ունենան:
Մայիս 10ին Հայրապետական ձայնաւոր պատարագ
պիտի մատուցանէ Արհի. Պետրոս Արքեպ. Գօլաշենան:
Երգեցողութիւնը պիտի կատարեն Հռոմի Ք. Լ. Իւզ-
րցին ուսանողները: Պատարագէն յետոյ Ն. Արհի.
Տէրութիւնը պիտի տայ քահանայապետական օրհ-
նութիւնը եւ լիակատար ներդրութիւնը:

Այս տասն օրուան մէջ, այն հաւատացեալները
որ խոստովանելով, հաղորդուելով իրոյն կ. Հայոց ե-
կեղեցին պիտի այցելեն լիակատար ներդրութիւն պի-
տի շահին:

Ս. Զատիկի աւթիւն տաւ այս տարի Գեր.
Յակոբ Վ. Մաղարեան կեդրոնական բանտի մէջ
գտնուող Հասարակութեան բանտարկեալները այցե-
լելով, հոն Ս. Պատարագ մատոյց եւ Պատարագէն
վերջը ի ներկայութեան տեղւոյն պաշտօնեաներուն,
համառօտ խրատական մը խօսեցաւ իւրօքտիւնը:
Յիսուս Փրկիչ Մար. Եկեղեցւոյ Պատ. Թաղապահ
Խորհրդոյն կողմէ յանձնուած բուականաշար գու-
մար մը, չէօրէք եւ հաւկիթ բաշխեց, յանձնարարելով
որ աղօթեն թագաւորին եւ հասարակութեան հո-
գեւոր իշխանութեան եւ բարերարաց համար:

ՆԵՒԻՒՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ. — Կը
յուսացուի որ ի Դոսոյ պիտի սկսի բարենորոգման
գործադրութիւնը: Թաւմիւր Էմբեար կ'ըսէ թէ Արե-
ւելեան Նահանգներու ընդհ. քննիչ ընտրուել են Հո-
լանտացի Մ. Վէսթէնէք եւ Նորվեգիացի Գիգ. Հօֆ:
— Մեծ փոխաւորութեան 21/2 միլիոն քաղի պիտի
սահմանուի Արեւելեան Նահանգաց մէջ գործադրուե-
լիք բարենորոգմանց եւ այդ գումարն երկու տարուան
մէջ պիտի ծախսուի:

Ի. Իրան շրջանակներուն մէջ կը հաւատարմե-
թէ վերին փոխաւորութեան կնքած են առաջ Ի. Իու-
աւ խոստացեր է Ֆրանսայի թէ կզդիներու մասին
տեղութեանց որոշումը պիտի ընդունի: Հետեւաբար
օսմ. Կառավարութիւնն այս օրերս ծանուցադրած
զրկելով եւրոպական քահանայներուն Էմպրոս, եւ թե-
նէտոս կզդիներուն վերադարձուիլ պիտի պահանջէ:
Հասան անուն տեմ մը, որ Իերայի մէջ քրիս-
տոնեայ խանութներէ առեւտուր ընել ուղող իշխմ.
կրնէրու հագստաններուն վրայ մեղան կը քսէր, քե-
շակալուեցաւ եւ պատերազմական ստեանին յանձ-
նուեցաւ:

Իրամներու մասին հետեւեալ աւժամեայ օ-
րէնքը հրատարակուեցաւ.
Ծօղում 4.— Յ11 տարւոյն սկիզբէն այլեւս իբր
գրամ պիտի չնկատուին կառավարական ստաւակնե-
րուն կողմէ օ զրչի ընդունուած վեցնոց մեթալիկ-
ները, անոնց յիսուն եւ հարիւր փարանոց կէս եւ քա-
ռորդ մասերը, ցարդ 100 եւ 50 փր. ընդունուած
մեթալիկները (քարա պէշիք) եւ անոնց կոտորակները,
արծաթ 400ոցները ու 200ոցները: Ստեղծան Մահ-
մուտի ժամանակ կոխում օ, 40 եւ 20 փարանոց
հին մէրալիքներն եւ 310 Մորտ 26 թուակեր կայս.
իրատէով կոխում եւ հրապարակ հանուած 40 եւ 5
փարանոց նոր մեթալիկները, որոնք յիսուն 331 տար-
ւոյն սկիզբը կառավարական ստաւակներուն թաղա-
պետական շրջանակներուն, պաշտօնական հաստատու-
թիւններուն եւ ելմական ու հանրօգուտ շինու-
թեանց ստաւակներուն կողմէ իբր վճարում պիտի ըն-
դունուին, բայց վար պիտի դրուեն:

Ծօղ. 2.— Ա. յօդուածին մէջ յիշատակուած
գրամները ներկայ օրէնքին հրատարակութեան թուա-
կանէն սկսեալ մինչեւ 332 տարւոյ սկիզբը նիքէլ

դրամով և զրոյ զրոյ ին պիտի փոխանակուին կառավարական անուաններն, ելմտական գանձութեանը մասնաճիւղերուն և փողերանոցի վարչութեան կողմէ:

Յօդ. 3.— Այս օրէնքին հրատարակութեան թուականէն սկսեալ մէճիսիւի կոտորակներէն արծաթ 20նոցներ և 40նոցներ պիտի չկոտորուին ալիւս:

Յօդ. 4.— Այս օրէնքով կը ջնջուին ամէն տեսակ կանոններ և որոշումներ որոնք կրնան ընդհանրապէս արժաթ գրամներուն շրջապիւղութեան մէջ զբաշտուած քանակութիւնն աւելցնելու ծառայել:

Յօդ. 5.— 1326 տարւոյ ընդհանրապէս կը ջնջուին 10րդ յօդուածին տրամադրութեամբ որոշուած հարկեր միլիոն զրոյաց նիւթէլ գրամներուն ցարդ հրապարակ հանուած քանակութեան մնացորդ մասը միմիայն Բ. յօդուածով յիշատակուած փոխանակութեան պիտի յստկանայ և հրապարակ պիտի չհանուի բնաւ:

*. Ֆէնէրի Յունաց մայր եկեղեցիին մէջ այս տարի տեղի շուկեցան Ձատկի առտուան հանդիսական արարողութիւնները, պաշտօնական ընդունելութիւններն և ոչ ալ մայրաքաղաքիս յոյն եկեղեցիներուն մէջ Ձատկի առտուան թափօրները, համաձայն Սինոդի որոշման վանս զի թրակիոյ Յոյներուն գաղթականութեան խնդրին առթիւ եղած դիմումներէն զոհացուցիչ արդիւնք մը ձեռք բերուած չլլալով, Սինոդը սուգի մէջ կը նկատէր Սրբոտոք եկեղեցին:

*. Պաշտօնաթիւերը հրատարակեց հետեւեալ առժամեայ օրէնքը.

Յօդուած Ա.— Ներում չորհուած է այն անձերուն որ քաղաքական ոճիրներ գործած են՝ առնչակից պատերազմի վիճակին ընդմէջ կայս. կառավարութեան և այն պետութեանց որոնց հետ հաշտութեան դաշնագիր կնքուեցաւ, ինչպէս նաև այն անձերուն որ հասարակ ոճիրներ գործած են Էտիոպիայի նահանգին ու Չալժալճոյի գաւառին մէջ, մինչեւ 1329 Յուլիս 10:

Յօդ. Բ.— Այս ներումէն պիտի չօգտուին անոնք որ աղջիկներու պատիւը բռնաբարած են եւ բռնի բռնաբարում բրած են:

*. Գոնիոյի մէջ առատ ձիւն տեղալով բարձրութիւնն երկու թիւը անցած է և տակաւին կը ձիւնէ: Էնկիւրիի, Ա.Ֆիսի Գորաշխարի և Քեօթա. հիւսի մէջ ալ առատ ձիւն տեղացած է:

*. Անգլիոյ թագաւորն ու թագուհին Ապրիլ 2ին Բարիզ ժամանեցին: Բարիզի մէջ կարելի է ըսել թէ մինչեւ հիմա այսքան խաղաղապետութիւն ցոյց տրուած չէր: Առտուն կանուխէն սկսեալ ծառերն ու ծառերը և փողոցները միւս օրերու երեւոյթն ունէին: Անգլիոյ թագաւորն ու թագուհին կէս օրէն երեքուկէս ժամ ետք ժամանեցին Պուս ար Պուլժոնի կայարանը: Շանդիլիէն, Քոնքորտի հրապարակը և Թիւրքիոյ դարաւորները քանի մը ժամ առաջուրէն ստուար բազմութիւն մը գրաւած էր: Ընդունելութիւնը շատ չեք ու սիրալի եղաւ:

— Բարիզի դիւանագիտական շրջանակներուն մէջ մեծ կարեւորութիւն կ'ընծայեն Անգլիոյ արքայական ամսիկն Բարիզ այցելելուն:

*. Իտալական թելթերը Տուրացոյէն կ'իմանան թէ Ալպանիոյ կացութիւնը ծանրացած է:

— Հաւանական կը նկատուի թէ Ալպանիոյ տեսակցութեան միջոցին Աւստրիոյ և Իտալիոյ միջեւ համաձայնութիւն մը գոյացած ըլլայ՝ երկու տերութեանց կողմէ ի հարկին զինեալ միջամտութիւն մը ընելու Ալպանիոյ մէջ, եթէ Աթէնքի մէջ լուծման եղանակ մը չգտնուի:

*. Մարտանաւի պաշտօնային մը ձերբակալութեան պատճառաւ Մ. Նահանգներու և Մեքսիկոյի նախագահ զօրավար Հուէթթայի միջեւ յարաբերութիւնները սպառնալից հանգամանք մը կ'առնուի: Ամերիկեան նաւատորմը ճամբայ ելած է Մեքսիկեան ջուրերն երթալու և նաւահանգիստները պաշարելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր եւ սկզբունքներ	257
Սիւսիլէ	260
Նամակ առ Աղեքսանդր Կաթողիկոս	262
Նամակ Տրապիզոնէն	264
Եօթնեակ Քրիստոսէի	265
Եւղակիայէն	266
Այլեւայլ	267
Հալէպի Կ. Հայոց վարժարանը	269
Տեղեկագրական	270

ԱՐՏՈՆԱՏԵՐ

ՅՈՎԷՆ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՎՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Մ. Վ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպարան Կ. Արժագանգ Զարաթերթի, Բերս, Պալատաֆոզոց քիւ 5, Կ. Պալիս

ԲԱՅԵՑՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Թուրքոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20 .— մէկ թիւ՝ 1 դհկ. :—Արսաւահ-
ման՝ տար. 3ր. 10. վեցամս. 5.— Վճարմունք կանխիկ են :

ՀԱՍՑԷ .— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, Կ.
Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարագի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: Յօդուածներու 5.—
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնը
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նմանակադրոյմ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Գրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:

Տէր Կոմիտաս Բահանային վարքը. գին 5 դհկն.:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստմանայ-
նի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար կը տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրատարակիչներ, քարդեր, քարդ-ատրէճներ,
մահազդներ, եւն. եւն.: Գինները անմեղքի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյտ գոհ պիտի
ընան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 130.000.000 de couronnes

Réserves: 40.000.000

SIÈGE CENTRAL à VIENNE : I. Schottenring

SUCCURSALES EN AUTRICHE-HONGRIE

Agram, Amstetten, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegenndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwillau.

SUCCURSALES EN TURQUIE :

Constantinople et Smyrne.

La Succursale de Constantinople (avec Siège de Galata, Place du Pont de Karakeuy et Agences à Stamboul, Péra et Scutari) fait toutes opérations de banque, telles que:

Avances en Compte-Courant nanties par des titres ou des effets de commerce.

Avances sur Marchandises.

Achat et vente de change sur l'Etranger.

Escompte d'effets de commerce.

Emission de chèques, et de lettres de crédit.

Ordonnancements télégraphiques sur la Turquie et l'Etranger.

Encaissement d'effets sur la Turquie et l'Etranger.

Encaissement de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages.

Ouverture de Comptes-Courants, ainsi que d'accréditifs simples et documentaires.

Exécution d'ordres de Bourse.

Garde de valeurs publiques etc. etc.

Caisse d'Epargne.

Locations de coffre-fort.